



Չեղինակ՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի սահմանադրական և
միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
Փաստաբանների միջազգային միության անդամ Վարդան Այվազյան

Խմբագիր՝ ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահ, իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ



ԵՐԵՎԱՆ 2004

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Ֆարց 1. Ո՞վ է մարդու իրավունքների պաշտպանը 6

Ֆարց 2. Ինչո՞վ է պայմանավորված պաշտպանի ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ լինելը 6

Ֆարց 3. Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ պաշտպանի բնականոն գործունեությունն ապահովելու համար 8

Ֆարց 4. Ի՞նչ չափանիշներ են կիրառվում պաշտպանի պաշտոնը զբաղեցնելու համար 9

Ֆարց 5. Ինչու՞ է սահմանափակվում պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքը 10

Ֆարց 6. Ե՞րբ են դադարում պաշտպանի լիազորությունները 11

Ֆարց 7. Ո՞ր հարցերին առնչվող բողոքներն են ենթակա պաշտպանի իրավասությանը 13

Ֆարց 8. Որո՞նք են պաշտպանի կողմից պաշտպանվող իրավունքներն ու ազատությունները՝ նախատեսված ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, միջազգային պայմանագրերով և միջազգային իրավունքի սկզբունքներով 14

Ֆարց 9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ինչպե՞ս են ոտնահարվում մարդու իրավունքներն ու ազատությունները 15

Ֆարց 10. Ինչպե՞ս է պաշտպանը առնչվում դատական իշխանության մարմինների գործունեությանը 16

Ֆարց 11. Ինչո՞ւ պաշտպանը չի քննարկում ոչ պետական մարմինների և կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բողոքները 17

Ֆարց 12. Ովքե՞ր իրավունք ունեն դիմելու պաշտպանին 17

Ֆարց 13. Պաշտպանին տրվող բողոքի համար ի՞նչ չափանիշներ են նախատեսվում 20

Ֆարց 14. Ինչպե՞ս է պաշտպանն արձագանքում տրված բողոքներին . 21

Ֆարց 15. Պաշտպանի կողմից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար պարտադի՞ր է արդյոք բողոքի առկայությունը 23

Ֆարց 16. Որո՞նք են պաշտպանի կողմից քննարկման ոչ ենթակա բողոքները 23

Ֆարց 17. Ո՞րն է բողոքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պարզաբանումների նպատակը	24
Ֆարց 18. Պաշտպանի կողմից ի՞նչ բնույթի որոշումներ են ընդունվում 25	
Ֆարց 19. Ի՞նչ իրավաբանական ուժ ունեն պաշտպանի որոշումները և ի՞նչ երաշխիքներ կան դրանց իրականացման համար	27
Ֆարց 20. Որն է պաշտպանի՝ Յանրապետության Նախագահին և Ազգային ժողովին ներկայացվող զեկույցի նպատակը	28
Ֆարց 21. Ովքե՞ր են աջակցում պաշտպանի գործունեությանը	28
Մարդու իրավունքներն ու ազատությունները	30
Չայաստանի Յանրապետության օրենքը մարդու իրավունքների պաշտպանի մասին	32

Մարդու իրավունքները համամարդկային արժեքներ են, որոնց պաշտպանությունը ոչ միայն միջազգային հանրության, այլև բոլոր պետությունների սրբազան պարտքն է: Յուրաքանչյուր զարգացած պետության պարտականությունն է իրականացնել այդ իրավունքներն ու ազատությունները, հոգ տանել քաղաքացիների բարեկեցության համար, պաշտպանել նրանց իրավունքները թե՛ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց, թե՛ այլ քաղաքացիների ու կազմակերպությունների ոտնձգություններից: Ուստի ցանկացած պաշտոնատար անձ պետք է գիտակցի, որ մարդու իրավունքների և ազատությունների իրականացմանն ուղղված իր ջանքերը ոչ թե բարի կամքի դրսևորում են կամ բարեգործություն, այլ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իր վրա դրված պարտականություն, որի կատարման մեջ զլանալու դեպքում նրա նկատմամբ կարող են կիրառվել պատասխանատվության միջոցներ: Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքը ամրագրում է պետության՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան (հոդվ. 4-րդ) ապահովելու պարտականությունը: Սահմանադրական այդ նորմի պահանջներին համապատասխան՝ պետությունն իրավական տարբեր միջոցներով ջանում է պաշտպանել մարդու իրավունքները և ազատությունները, իրականացնել դրանց արդյունավետ կարգավորումը: Այդ խնդրի լուծմամբ զբաղվում են Հայաստանի Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովը, կառավարությունը, դատական իշխանության մարմինները և պետական ապարատի մյուս ստորաբաժանումները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Սակայն հաճախ հենց պետական մարմինների կողմից են ոտնահարվում մարդու իրավունքներն ու ազատությունները:

Հայտնի է, որ հենց պետական մարմիններն ունեն մարդու իրավունքներն ու ազատությունները թե՛ պաշտպանելու և թե՛ խախտելու առավելագույն հնարավորություններ: Որպեսզի պետական մարմինները պաշտպանեն մարդու իրավունքներն ու ազատությունները (որը նրանց գոյության հիմնական պայմանն է), միաժամանակ չխախտեն դրանք, հանրապետության Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով ամրագրվում է նրանց իրավասությունը՝ իրավունքների և պարտականությունների շրջանակները, որոնց շրջանցման կամ չարաշահման դեպքում իրավազանց պաշտոնատար անձի նկատմամբ կարող են կիրառվել իրավաբանական պատասխանատվության միջոցներ:

Ժողովրդավարական կարգ ունեցող զարգացած երկրներում կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց ոտնձգություններից քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ամենատարածված միջոցներից է մարդու իրավունքների հարցերով խորհրդարա-

նական լիազորի (ombudsman) սկանդինավյան ինստիտուտը, որը տարբեր երկրներում տարբեր կերպ է կոչվում (Մեծ Բրիտանիայում՝ պառլամենտական կոմիսար, Ավստրիայում և Իսպանիայում՝ ժողովրդական պաշտպան, Ֆրանսիայում՝ միջնորդ, Ռուսաստանում՝ մարդու իրավունքների լիազոր և այլն): Եթե 20-րդ դարի 50-ական թվականներին խորհրդարանական լիազորի ինստիտուտը գործում էր ընդամենը երկու երկրում (Շվեդիա և Ֆինլանդիա), ապա ներկայումս գործում են 150-ից ավելի մարմիններ, որոնք իրականացնում են այդ կառույցի լիազորությունները: Փաստորեն «ombudsman»-ը բարդ սոցիալ-իրավական երևույթ է, որը ոչ միայն իրավաբանական ինստիտուտ կամ հաստատություն է, այլև հասարակական կապերի և հարաբերությունների համակցություն կամ քաղաքական և իրավական մշակույթի որոշակի ձև: Այսինքն՝ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը քաղաքացիական հասարակության կարևոր բաղադրիչներից է: Վերջինիս գործունեությունն այդ առումով առավել արդյունավետ է ժողովրդավարական լուրջ ավանդույթներ ունեցող պետություններում: Պատահական չէ, որ «ombudsman»-ի ինստիտուտն առավել տարածված է ինչպես մայրցամաքային, այնպես էլ անգլո-սաքսոնական իրավական համակարգի երկրներում: «Ombudsman»-ը պետության սահմանադրությամբ կամ օրենսդիր իշխանության մարմնի ակտով նախատեսված ծառայություն է, ղեկավարվում է բարձրաստիճան անկախ պաշտոնատար անձի կողմից, որը պատասխանատու է օրենսդիր իշխանության առջև, բողոքներ է ստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից տուժած անձանցից, գործում է սեփական հայեցողությամբ և իրավասու է հետաքննություն կատարելու, պետական մարմիններին առաջարկելու վերացնել թույլ տրված իրավախախտումները և այդ կապակցությամբ զեկույցներ ներկայացնելու օրենսդիր իշխանության մարմնին:

«Ombudsman»-ը պաշտպանում է ինչպես անհատական, այնպես էլ հասարակական շահեր: Նրա գործունեության շնորհիվ հնարավորություն է ստեղծվում խուսափելու պետական մարմինների և անձանց բախումներից, որոնց հետևանքով ձևավորվող անվստահության մթնոլորտն ու լարվածությունը կարող է իսպառ օտարել քաղաքացուն պետությունից: «Ombudsman»-ի լիազորությունների իրականացումը էապես նպաստում է պետական մարմինների պաշտոնատար անձանց կողմից թույլ տրվող իրավախախտումների նվազեցմանը:

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ դառնալուց հետո պարտավորվեց ձևավորել «ombudsman»-ի ինստիտուտը: Մինչև «ombudsman»-ի ինստիտուտի ստեղծումը տվյալ հիմնահարցերով ժամանակավորապես զբաղվում էր Հանրապետության Նախագահին առընթեր Մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովը: 2003թ. հոկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը, որով էլ հայ իրականության մեջ հիմնադրվեց «ombudsman»-ի ինստիտուտը:

Չարդ 1. Ո՞վ է մարդու իրավունքների պաշտպանը:

Պատասխան

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է մարդու իրավունքների պաշտպանի կարգավիճակը, ըստ որի՝ մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ պաշտպան) ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ է, որը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

Չարդ 2. Ինչո՞վ է պայմանավորված պաշտպանի ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ լինելը:

Պատասխան

Ելնելով մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող գործառնությունների կարևորությունից, օրենքը նախատեսում է մի շարք երաշխիքներ, որոնք ապահովում են նրա անկախությունը պետական իշխանության մարմիններից: Մասնավորապես պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ավելի քան 3/5 ձայներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից (3-րդ հոդվ., 2-րդ կետ): Պաշտպանի նշանակման կարգը առաջին հայացքից թվում է պարզ և մատչելի, սակայն ըստ էության այն բավականին բարդ գործընթաց է: Խնդիրն այն է, որ նրան նշանակելիս չափազանց դժվար է Ազգային ժողովում պատգամավորների ձայների 3/5-ի ապահովումը: Հայտնի է, որ մեր երկրում գործում է բազմակուսակցական քաղաքական համակարգ: 2003թ. ձևավորված Ազգային ժողովում կան 6 կուսակցական խմբակցություններ և մեկ պատգամավորական խումբ, ուստի քիչ հավանական է, որ մարդու իրավունքների պաշտպանն ստանա 131 պատգամավորներից առնվազն 79-ի (131-ի 3/5-ը) վստահությունը: Փաստորեն մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում առաջադրված թեկնածուն պետք է այնքան հեղինակություն ունենա, որ կարողանա ապահովել խորհրդարանում մեծամասնության և ընդդիմության փոխհամաձայնությունը, քանի որ, առանց այդ երկու քաղաքական ուժերի սատարման, անհնար կլինի ձևավորել պաշտպանի պաշտոնը: Ասվածից հետևում է, որ պաշտպանի նշանակման ընթացակարգը շատ ավելի բարդ է, քան ՀՀ սահմանադրական դատարանի անդամների և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի նշանակման, Հանրապետության Նախագահի վետոյի հաղթահարման, կառավարությանն անվստահություն հայտնելու կամ ՀՀ Ազգային ժողովի նախագահ ընտրելու ընթացակարգերը:

Պաշտպանի ինստիտուտը դեռևս նախատեսված չէ Հայաստանի Հան-

րապետության Սահմանադրությամբ, ուստի «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի անցումային դրույթների համաձայն՝ մինչև սահմանադրական փոփոխությունները պաշտպանին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը Ազգային ժողովի խմբերի և խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Ընդ որում, առաջին պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանում է օրենքով սահմանված կարգով՝ սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո երեսուներորդ օրը:

Պաշտպանի անկախության կարևոր երաշխիք են նաև նշված օրենքի 5-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին: Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի: Պաշտպանի անկախության կարևոր նախապայման է համարվում նաև նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը, որն ամրագրված է օրենքի 18-րդ հոդվածում, ըստ որի՝ պաշտպանի որոշումների վրա ազդելու նպատակով նրա գործունեությանը միջամտելը կամ պաշտոնատար անձանց կողմից պաշտպանի՝ սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ սահմանված ժամկետներում նյութեր կամ փաստաթղթեր չներկայացնելը կամ պաշտպանին սպառնալը, նրան վիրավորանք հասցնելը առաջացնում է պատասխանատվություն՝ դատավորի կամ դատարանի հանդեպ համանման խախտումների համար նախատեսված կարգով և չափով: «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, կուսակցությունների, հասարակական միավորումների և լրատվության միջոցների ցանկացած միջամտություն դատավորի գործունեությանը, արդարադատություն իրականացնելիս, անթույլատրելի է և առաջացնում է օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն:

Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ (նաև որպես վկա) իր մոտ գտնվող բողոքների կամ փաստաթղթերի բովանդակության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Միաժամանակ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը հղում է անում ՀՀ քրեական օրենսգրքի այն դրույթներին, որոնք ապահովում են պաշտպանի անձեռնմխելիությունն իր լիազորություններն իրականացնելիս: Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի պատասխանատվություն է նախատեսում արդարադատության իրականացումը և քննությունը խոչընդոտելու (332-րդ հոդվ.), դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի (343-րդ հոդվ.), դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելու (344-րդ հոդվ.), նախնական քննություն վարելու կամ ար-

դարադատությունն իրականացնելու հետ կապված սպառնալիքի կամ բռնի գործողությունների (347-րդ հոդվ.) և այլ արարքների համար: ՀՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ դրույթները հավասարապես վերաբերում են նաև պաշտպանի արդյունավետ գործունեության ապահովմանը:

Հարց 3. Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ պաշտպանի բնականոն գործունեությունն ապահովելու համար:

Պատասխան

Պաշտպանի բնականոն գործունեությունն ապահովելու համար օրենքը նրան օժտել է անձեռնմխելիության իրավունքով (հոդվ. 19-րդ): Դա նշանակում է.

ա) Պաշտպանի լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, նա չի կարող կալանավորվել կամ ձերբակալվել, նրա բնակարանը չեն կարող խուզարկել առանց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաձայնության: Պաշտպանի անձեռնմխելիությունը տարածվում է նաև նրա ուղեբեռների, նամակագրության, օգտագործած կապի միջոցների, ինչպես նաև նրան պատկանող փաստաթղթերի վրա:

բ) Պաշտպանին հանցանքի վայրում բռնելու դեպքում ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Ազգային ժողովին, որը իրավասու է որոշում կայացնել ձերբակալության առթիվ համաձայնություն տալու մասին: Նման համաձայնություն 24 ժամվա ընթացքում չստանալու դեպքում ձերբակալություն իրականացնող անձը պարտավոր է անմիջապես ազատ արձակել պաշտպանին:

գ) Պաշտպանն իրավունք ունի հրաժարվելու իր պարտականությունները կատարելու ընթացքում իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին քրեական կամ քաղաքացիական գործով որպես վկա ցուցումներ տալուց:

Պաշտպանի անձեռնմխելիությունը, ըստ էության, օրենքով նախատեսված պաշտպանական միջոցների ամբողջություն է, որը նպատակ ունի զերծ պահելու նրա գործունեությունը պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ոտնձգություններից, նրա արդյունավետ աշխատանքը խանգարելու փորձերից:

Օրենքի 20-րդ հոդվածը նախատեսում է պաշտպանի գործունեության մի շարք սոցիալական երաշխիքներ: Մասնավորապես պաշտպանի աշխատավարձը հավասար է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի, Ազգային ժողովի նախագահի և վարչապետի աշխատավարձերին, որոնք սահմանված են «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» 2002թ. դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքով: Բացի դրանից, օրենքի 21-րդ հոդվածն ամրագրում է պաշտպանի անվտանգությունն ապահովելու խնդիրը, ըստ որի՝ պաշտ-

պանը և իր ընտանիքի անդամները գտնվում են պետության պաշտպանության ներքո: Իրավասու պետական մարմինները պաշտպանի դիմումի հիման վրա պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ վերջինիս և նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

Չարդ 4. Ի՞նչ չափանիշներ են կիրառվում պաշտպանի պաշտոնը զբաղեցնելու համար:

Պատասխան

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պաշտպանի պաշտոնում նշանակվում է Չայաստանի Հանրապետության՝ 35 տարին լրացած այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ և հասարակության մեջ բարձր հեղինակություն: Ինչպես երևում է օրենքի շարադրանքից, պաշտպանի պաշտոնում նշանակվելու համար պահանջվում է չորս ցենզ:

1. Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածուն պետք է բավարարի տարիքային ցենզը՝ 35 տարի, ելնելով այդ պաշտոնի համար նախատեսված բարձր պատասխանատվության աստիճանից՝ պետք է ունենա հասունության որոշակի մակարդակ, աշխատանքի և կենսափորձ, որպեսզի կարողանա հաջողությամբ լուծել իր առջև դրված բարդ խնդիրները: Չայաստանի Հանրապետության Սահմանադրությունը այդպիսի ցենզ (35-ից ոչ պակաս տարիք) նախատեսում է նաև Հանրապետության Նախագահի և սահմանադրական դատարանի անդամների համար:

2. Թեկնածուն պետք է ունենա ՀՀ քաղաքացիություն, քանի որ քաղաքացիությունը պետության և անձի կայուն իրավական կապ է, որի ուժով անձը, բացի իր բնական իրավունքներից ու ազատություններից, պետությունից ձեռք է բերում նաև քաղաքական իրավունքներ ու ազատություններ: Հանրապետության Սահմանադրությունը պետական մարմիններում պաշտոն զբաղեցնելու իրավունքը վերապահում է միայն իր քաղաքացիներին, ուստի պաշտպանը պետք է ունենա քաղաքացիություն, քանի որ նրա պաշտոնը համարվում է պետական պաշտոն:

3. Օրենքը պաշտպանի պաշտոնի համար նախատեսում է բարձրագույն կրթություն և մարդու իրավունքների ու ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ու փորձ, որոնք կարող են ձեռք բերվել հասարակական իրավապաշտպան, փաստաբանական գործունեության, իրավապահ մարմիններում (դատարան, դատախազություն, սահմանադրական դատարան և այլն), միջազգային իրավապաշտպան կառույցներում աշխատելու, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու և բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդելու արդյունքում:

4. Ինչ վերաբերում է հասարակության մեջ բարձր հեղինակություն ունենալուն, ապա մարդու իրավունքների պաշտպանը պետք է աչքի ընկնի ան-

բասիր վարքագծով, օժտված լինի բարոյական բարձր հատկանիշներով և վայելի հասարակության ամենալայն շերտերի հարգանքն ու վստահությունը: Պաշտպանի բարձր վարկանիշը հասարակության մեջ որոշվում է նրա մարդկային հատկությունների համակցությամբ (խոհեմություն, բարոյական տվյալներ, գիտելիքների բարձր մակարդակ, սոցիալապես օգտակար հատկություններ, օրինակելի ընտանեկան հարաբերություններ, արժանավայել կենսակերպ, գործարար հատկություններ և այլն):

Օրենքով պաշտպանի պաշտոնավարման ժամկետը նախատեսվում է 6 տարի, ըստ որում նույն անձը պաշտպանի պաշտոնը չի կարող զբաղեցնել իրար հաջորդող երկու ժամկետից ավելի:

Ջարգացած ժողովրդավարական կարգ ունեցող երկրներում արմատավորված պրակտիկայի համաձայն, այն բարձրաստիճան պաշտոնատար անձինք, որոնց գործունեությունն անմիջականորեն առնչվում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, իրենց պաշտոնն ստանձնելիս հանդես են գալիս հանդիսավոր երդմամբ: Նման կարգ է սահմանված նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ Հանրապետության Նախագահը, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, քաղաքացիական ծառայողները, մարդու իրավունքների պաշտպանը իրենց պաշտոնն ստանձնելիս հանդես են գալիս երդմամբ:

Իհարկե, երդումը չի կարող իրավական հետևանքներ առաջացնել այն խախտելու դեպքում, այդուհանդերձ, բարոյական բարձր հատկանիշներ ունեցող անձի համար այն լրացուցիչ խթան է, որպեսզի բարեխղճորեն կատարի օրենքով իր վրա դրված պարտականությունները:

Հարց 5. Ինչու՞ է սահմանափակվում պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Պատասխան

Օրենքի 4-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ պաշտպանի աշխատանքային գործունեությունը համարվում է պրոֆեսիոնալ գործունեություն, այսինքն՝ պաշտպանը չի կարող զբաղեցնել ուրիշ պետական պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Պաշտպանը պարտավոր է օրենքի նշված պահանջներին չհամապատասխանող գործունեությունն ընդհատել պաշտոնավարության անցնելուց հետո ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում: Օրենքի՝ պետական ապարատում այլ պաշտոն զբաղեցնելու և այլ վճարովի գործունեությամբ զբաղվելու անհամատեղելիության վերաբերյալ պահանջը նպատակ ունի կանխելու պաշտպանի ուշադրության ամեն մի շեղում իր մշտական իրավապաշտպան գործունեությունից, ինչպես նաև զերծ պահելու նրան ամեն տեսակ կախվածությունից և կողմնակի ազդեցություններից:

Նույն հոդվածի երկրորդ մասն ամրագրում է պաշտպանի ապաքաղաքականացման սկզբունքը, ըստ այդմ՝ պաշտպանը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ ընտրություններում առաջադրել իր թեկնածություն-

նը, մասնակցել նախընտրական քարոզչությանը կամ ցանկացած ձևով զբաղվել քաղաքական գործունեությամբ: Այս սկզբունքն ունի երկակի նշանակություն. մի կողմից՝ այն ապահովում է պաշտպանի անկախությունը հնարավոր քաղաքական ազդեցություններից ու միջամտություններից, մյուս կողմից՝ նպաստում է քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքի դրսևորմանը:

Պաշտպանը պետք է զերծ մնա քաղաքականությունից, որպեսզի կարողանա անաչառ կերպով պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները՝ ելնելով ոչ թե նպատակահարմարությունից, այլ օրենքից: Մարդու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելիս պաշտպանը բացառապես պետք է առաջնորդվի Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ու նորմերով:

Չարդ 6. Ե՞րբ են դադարում պաշտպանի լիազորությունները: Պատասխան

Օրենքի 6-րդ հոդվածից պարզորոշ հետևում է, որ պաշտպանի լիազորությունները դադարում են երկու եղանակով՝ օրենքով սահմանված ժամկետում և վաղաժամկետ:

Առաջին դեպքում պաշտպանի լիազորությունները դադարում են նրա պաշտոնավարման ժամկետը լրանալու հաջորդ օրը: Իսկ երկրորդ դեպքում պաշտպանի լիազորությունները դադարեցվում են վաղաժամկետ՝ հետևյալ պատճառներով.

1) Խախտվել են օրենքի 4-րդ հոդվածի պահանջները: Այսինքն՝ պաշտպանը անդամագրվել է որևէ քաղաքական կուսակցության, ընտրություններում առաջադրել է իր թեկնածությունը, մասնակցել է նախընտրական քարոզչությանը, անցել է այլ պետական պաշտոնի և այլն:

2) Պաշտպանի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել: Չանրապետության Սահմանադրությունն ամրագրում է անմեղության կանխավարկածը, համաձայն որի՝ անձը համարվում է անմեղ այնքան ժամանակ, քանի դեռ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով չի հաստատվում նրա մեղավորությունը: Դատարանի կողմից պաշտպանի մեղավորության հաստատումը փաստում է, որ նա արդեն չի կարող բավարարել օրենքի՝ այդ պաշտոնի համար նախատեսված պահանջները (բարոյական բարձր հատկանիշներ, հասարակության մեջ բարձր հեղինակություն): Այդ կապակցությամբ ինչպես ցանկացած պաշտոնատար անձի, այնպես էլ պաշտպանի կողմից հանցագործություն կատարելը հանգեցնում է նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման:

3) Նա կորցրել է Չայաստանի Չանրապետության քաղաքացիությունը: ՀՀ Ազգային ժողովի կողմից 1995թ. նոյեմբերի 6-ին ընդունված «Չայաստանի Չանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ Չայաստանի Չանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է.

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում: Այդ իրավունքը վերապահված է Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացու, որը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից զրկվելու դեպքում: Անձը զրկվում է քաղաքացիությունից, եթե նա Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը ձեռք է բերել կեղծ տվյալների կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենսդրությունը խախտելով՝ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն:

4) Նա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով դիմում է ներկայացրել իր լիազորությունները վայր դնելու մասին: Տվյալ դեպքում պաշտպանի հրաժարականը Ազգային ժողովի կողմից ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5) Պաշտպանը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած: ՀՀ քաղաքացիական օրենսգրքը սահմանում է անձին անգործունակ ճանաչելու, անհայտ բացակայող կամ մահացած հայտարարելու հիմքերը: Մասնավորապես օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ այն քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Իսկ օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա մշտական բնակության վայրում տեղեկություններ չեն լինում իր գտնվելու վայրի մասին:

Ինչ վերաբերում է լիազորությունների վաղաժամկետ դադարեցման երրորդ հիմքին, ապա քաղաքացիական օրենսգրքի 47-րդ հոդվածն ամրագրում է, որ քաղաքացին դատարանով կարող է մահացած ճանաչվել, եթե նրա բնակության վայրում երեք տարվա ընթացքում տեղեկություններ չեն լինում իր գտնվելու վայրի մասին, իսկ եթե նա անհայտ կորել է այնպիսի հանգամանքներում, որոնք մահվան վտանգ են պարունակում կամ հիմք են տալիս ենթադրելու նրա մահը որոշակի դժբախտ դեպքի հետևանքով, ապա վեց ամսվա ընթացքում:

6) Պաշտպանը առողջական վիճակի պատճառով ոչ պակաս, քան 6 ամիս անընդմեջ իր լիազորությունները չի կատարել:

7) Պաշտպանը մահացել է:

Վերոնշյալ բոլոր դեպքերում պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին հարցը Ազգային ժողովի քննարկմանը կարող են

ներկայացնել, օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, պաշտպանի պաշտոնում թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեցող անձինք: Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Պաշտպանի լիազորությունների դադարեցման դեպքում նրա պաշտոնը պետք է զբաղեցվի պաշտոնը թափուր մնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Մինչև նոր պաշտպան նշանակվելը նրա պարտականությունները կատարում է տեղակալը:

Չարդ 7. Ո՞ր հարցերին առնչվող բողոքներն են ենթակա պաշտպանի իրավասությանը:

Պատասխան

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանը քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Չայաստանի Չանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված մարդու (քաղաքացու) իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

ա) Չայաստանի Չանրապետության պետական մարմինները կազմում են մեկ միասնական համակարգ: Պետական մարմինը մեկ քաղաքացի է կամ քաղաքացիների կոլեկտիվ՝ պետության կողմից լիազորված իրականացնելու իր գործառնությունները: Պետական մարմինը օժտված է պետա-իշխանական լիազորություններով, կազմավորվում և գործում է Սահմանադրությամբ ու օրենքներով սահմանված կարգով և պետական ապարատի բաղկացուցիչ մասն է: Պետական մարմինները բաժանվում են օրենսդիր, գործադիր և դատական մարմինների: Մեր երկրում պետական մարմիններն են ՀՀ նախագահը, Ազգային ժողովը, Ազգային ժողովի պատգամավորը, ՀՀ կառավարությունը, նախարարությունները, կառավարությանն առընթեր գերատեսչությունները, պետական կառավարման տարածքային մարմինները (մարզպետարանները), ընդհանուր իրավասության և տնտեսական դատարանները, սահմանադրական դատարանը, դատախազությունը, մշտապես գործող պետական հանձնաժողովները (ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ՀՀ արժեթղթերի հանձնաժողով, ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողով և այլն):

բ) Տեղական ինքնակառավարումը բնակչության՝ Չայաստանի Չանրապետության Սահմանադրությամբ ճանաչված և երաշխավորված ինքնուրույն և պատասխանատու ոլորտ է, որը նպատակաուղղված է անմիջականորեն կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով տեղական նշանակության հարցերի լուծմանը՝ ելնելով բնակչության շահերից, նրա պատմական և տեղական ավանդույթներից:

Տեղական ինքնակառավարման մարմինները բնակչության կողմից ընտր-

վող մարմիններ են, որոնց հանձնարարվում է իրականացնել տեղական ինքնակառավարման խնդիրներ, այսինքն՝ տեղերում իրականացնել ժողովրդի իշխանությունը և լուծել համայնքային խնդիրները: Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքների ղեկավարները (գյուղապետեր, քաղաքապետեր) և ավագանին:

գ) Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձը նա է, ով մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կամ հատուկ լիազորությամբ իրականացնում է իշխանության ներկայացուցչի գործառույթներ, այսինքն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, զինված ուժերում կատարում է կազմակերպական-կարգադրիչ և վարչատնտեսական գործառույթներ: Կազմակերպական-կարգադրիչ գործառույթ մշանակում է աշխատանքային կոլեկտիվի կամ առանձին աշխատողների արտադրական գործունեության որոշակի տեղամասի ղեկավարում: Վարչատնտեսական գործառույթ մշանակում է պետական կամ մունիցիպալ սեփականության գույքի տնօրինում, դրա պահպանման, մշակման կարգի սահմանում և այլն: Այդպիսի պաշտոնատար անձ են համարվում Հանրապետության Նախագահը, նախագահի աշխատակազմի ծառայողները, Ազգային ժողովի պատգամավորները, Ազգային ժողովի աշխատակազմի ծառայողները, ՀՀ կառավարության անդամները, նախարարությունների աշխատակազմերի ծառայողները, ՀՀ կառավարությանն առընթեր գերատեսչությունների ղեկավարները և դրանց աշխատակազմերի ծառայողները, սահմանադրական դատարանի անդամները, սահմանադրական դատարանի աշխատակազմի ծառայողները, դատավորները, դատախազները, մարզպետները, մարզպետարանների աշխատակազմերի ծառայողները, մշտապես գործող պետական հանձնաժողովների անդամներն ու աշխատակազմերի ծառայողները, համայնքների ղեկավարները, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի ծառայողները, պետական և քաղաքացիական ծառայության մեջ ընդգրկված այլ պաշտոնյաներ:

Հարց 8. Որո՞նք են պաշտպանի կողմից պաշտպանվող իրավունքներն ու ազատությունները՝ նախատեսված ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, միջազգային պայմանագրերով և միջազգային իրավունքի սկզբունքներով:

Պատասխան

Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները նրան պատկանում են ի ծնե: Պետությունը, միջազգային կազմակերպությունները, հասարակությունը, օրենսդիրները կոչված են ոչ թե սահմանելու, այլ ճանաչելու և պաշտպանելու այդ իրավունքներն ու ազատությունները: Ճանաչելով մարդու բնական իրավունքներն ու ազատությունները՝ միջազգային կազմակերպությունները դրանք նախ ամրագրում են իրենց կողմից ընդունված իրավական փաստաթղթերում: Դրանցից առավել կարևորների շարքն են դասվում Մարդու իրավունքների միջազգային բիլլը, որի մեջ մտնում են ՄԱԿ-ի Գլխա-

վոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրերը, Եվրոպայի խորհրդի կողմից 1950թ. նոյեմբերի 4-ին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և այլն: Այն միջազգային փաստաթղթերը, որոնք վավերացվել են մեր երկրի օրենսդիր իշխանության մարմնի կողմից, դարձել են ՀՀ օրենսդրության անբաժան մասը և գերակայություն ունեն մյուս բոլոր օրենքների նկատմամբ (նշված իրավունքների և ազատությունների ցանկը տես հավելված 1-ում): Նշված միջազգային իրավական ակտերի դրույթներն իրենց հերթին արտացոլվել են ՀՀ Սահմանադրության մեջ, որի երկրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին:

Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու ազատություններն էլ իրենց հերթին մանրամասնվում են մեր երկրի ընթացիկ օրենսդրության մեջ: Հենց այս իրավունքներն ու ազատություններն են, որ կարող են ոտնահարվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Պաշտպանը քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու անձնական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների ու ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

Հարց 9. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ինչպե՞ս են ոտնահարվում մարդու իրավունքներն ու ազատությունները:

Պատասխան

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածն ամրագրում է, որ պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: Վերջիններիս կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների սահմանազանցումը կարող է հանգեցնել նաև մարդու իրավունքների, ազատությունների ու շահերի ոտնահարմանը:

Մարդու իրավունքներն ու ազատությունները կարող են ոտնահարվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Սահմանադրության և օրենքների պահանջների խախտմամբ ընդունված ակտերով, ինչպես նաև այդ մարմինների պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողությունների (անգործության) պատճառով, որոնք հանգեցնում են մարդու տարրական, ժողովրդավարական իրավունքների և ազատությունների իրացման ապօրինի խոչընդոտմանն ու սահմանափակմանը, ինչպես նաև մարդու նկատմամբ անեն տեսակ անօրինական բռնությունների կիրառմա-

նը: Օրինակ՝ պետական ծառայողների և պաշտոնատար անձանց այնպիսի գործողությունները կամ անգործությունը, որոնք հանգեցնում են կողմնապահության, անարդարացի վերաբերմունքի, հարցի լուծման անհիմն ձգձգման, վարչարարական սխալների, կանայականության, իշխանության չարաշահման, կոպտության, խտրականության, չհիմնավորվածության, անարդյունավետության, անփութության և այլն: Բացի դրանից, վերջիններիս կողմից կարող են ոտնահարվել նաև աշխատանքային օրենսդրությունը, արդյունաբերության մեջ աշխատանքի անվտանգության կանոնները կամ թույլ տրվել իրավախախտումներ, որոնք անմիջականորեն առնչվում են մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին: Գործադիր իշխանության մարմինների՝ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն առնչվող պարտականությունների օրենսդրական ամրագրումն անգամ չի երաշխավորում այդ իրավունքների պաշտպանությունը: Պատճառները բազմաթիվ են, որոնց թվում առաջին հերթին կարևորվում է քաղաքացիների իրավական գիտելիքների ցածր մակարդակը, որը հնարավորություն է տալիս պաշտոնատար անձանց հաճախ, նույնիսկ դիտավորյալ կերպով, կատարելու նրանց հանդեպ անօրինական գործողություններ:

Չարդ 10. Ինչպե՞ս է պաշտպանը առնչվում դատական իշխանության մարմինների գործունեությանը:

Պատասխան

Մեր երկրի Սահմանադրությունը (հոդվ. 5) ամրագրում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, համաձայն որի՝ պետական իշխանությունը, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման հիման վրա: Դա նշանակում է, որ պետական իշխանության յուրաքանչյուր թև իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորություններ: Ընդ որում նրանցից ոչ մեկն իրավունք չունի միջամտելու մյուսի գործունեությանը: Քանի որ մարդու իրավունքների պաշտպանը համարվում է մարդու իրավունքների պաշտպանության խորհրդարանական կառուցակարգ, նա չի կարող միջամտել դատական վարույթին, հակառակ դեպքում կխախտվի դատական իշխանության անկախության սկզբունքը: Սակայն նա կարող է տեղեկություններ պահանջել դատաքննության մեջ զոտնվող ցանկացած գործի մասին և առաջարկներ ներկայացնել դատարան՝ երաշխավորելով քաղաքացիների՝ Չայաստանի Չանրապետության Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ իրականացումը: Պաշտպանն իրավասու է դիմողին տալու առաջարկություններ կամ խորհրդատվություն դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ: Նման իրավական օգնություն քաղաքացուն կարող է տրվել նաև փաստաբանի կողմից: Սակայն մարդու իրավունքների

պաշտպանի միջամտությունը այս հարցում ունի առավելություն, քանի որ այն ավելի մատչելի է (անվճար), և դրական լուծում չստանալու դեպքում մարդու իրավունքների պաշտպանն ավելի լուրջ լծակներ ունի հարցի լուծմանը հասնելու համար:

Չարդ 11. Ինչո՞ւ պաշտպանը չի քննարկում ոչ պետական մարմինների և կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բողոքները:

Պատասխան

Մեր երկրի հիմնական օրենքը ամրագրում է մարդու իրավունքներն ու ազատությունները, որոնց ամբողջությունը կազմում է նրա իրավական կարգավիճակը: Պետությունը, ճանաչելով մարդու իրավունքներն ու ազատությունները, ոչ միայն ամրագրում է դրանք իր հիմնական օրենքում, այլև պարտավորվում է ապահովել դրանց իրականացումը: Այսինքն՝ մարդու իրավունքներին և ազատություններին համապատասխանում է պետության պարտականությունը:

Մարդու իրավունքների և ազատությունների իրականացումը կարող է խոչընդոտվել նաև այլ անձանց, ոչ պետական մարմինների ու կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց կողմից: Տվյալ դեպքում անձը իր իրավունքների պաշտպանության համար պետք է դիմի իրավասու պետական մարմնին: Վերջինս պարտավոր է համապատասխան միջոցներ ձեռնարկել այդ խոչընդոտների վերացման ուղղությամբ: Նշված բնագավառում պետական մարմինների պարտականությունների ոչ պատշաճ կատարումն արդեն հանգեցնում է մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարմանը: Միայն այս դեպքում է, որ անձը իրավունք է ստանում բողոք ներկայացնելու պաշտպանին իր խախտված իրավունքների վերականգնման կապակցությամբ:

Չարդ 12. Ովքե՞ր իրավունք ունեն դիմելու պաշտպանին:

Պատասխան

1. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից: Օրենքի նշված ձևակերպումից հետևում է, որ ի տարբերություն պետական մյուս մարմինների՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում պաշտպանի ծառայությունն անենամատչելի է: Փաստորեն նրան դիմելու իրավունք ունի կացության ցանկացած կարգավիճակ ունեցող մարդ, այդ թվում՝ ՅՅ քաղաքացիները, օտարերկրացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, փախստականները, բռնազաղթվածները, քաղաքական ապաստան հայցողները և այլն: Բացի դրանից, պաշտպանի ծառայությունները մատչելի են նաև

այն անձանց համար, որոնց իրավական և փաստացի վիճակը լրացուցիչ խոչընդոտներ է առաջացնում պաշտպանի ծառայություններից օգտվելու հարցում: Այդ իսկ պատճառով օրենքը պաշտպանին կամ նրա ներկայացուցչին իրավունք է վերապահում իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ ազատագրկման ձևով քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրեր՝ այնտեղ գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար:

2. Պաշտպանին իրավունք ունի դիմելու ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձը: Նշված հիմնարկների ղեկավարները պարտավոր են ապահովել զորամիավորումներում, ձերբակալման վայրերում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձանց հետ պաշտպանի կամ նրա ներկայացուցչի առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությունը: Տվյալ դեպքում թե՛ զորամիավորումների հրամանատարական կազմը, թե՛ քրեակատարողական հիմնարկների վարչակազմը պարտավոր են աջակցել պաշտպանին իր պարտականությունների կատարման հարցում: Մասնավորապես նրանք պետք է պաշտպանին ապահովեն կահավորված առանձնասենյակով, որտեղ վերջինս կարողանա կազմակերպել այդ հիմնարկներում պահվող անձանց ընդունելությունը: Պաշտպանի և վերջիններիս շփումը՝ ընդունելության ձևով, նպաստում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկությունների գաղտնիության պահպանմանը, ինչպես նաև հնարավորություն է տալիս զինծառայողներին և քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց անմիջականորեն հանդիպելու և մարդու իրավունքների պաշտպանին ներկայացնելու իրենց խախտված իրավունքների էությունը: Բացի դրանից, նրանք հնարավորություն են ստանում պաշտպանին հայտնելու գործին առնչվող այնպիսի փաստեր և մանրամասներ, որոնք գործնականում հնարավոր չէ ներկայացնել գրավոր դիմումի կամ բողոքի միջոցով: Այս գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով օրենքն ամրագրում է, որ պաշտպանի կամ նրա ներկայացուցչիների և այդ անձանց խոսակցությունները ենթակա չեն միջամտության և գաղտնալսման: Միաժամանակ պաշտպանին բողոք ներկայացնելը կամ նրա (պաշտպանի) միջամտությունը չպետք է հանգեցնի բողոքողի նկատմամբ քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցի կիրառման կամ որևէ խտրականության:

3. Պաշտպանին կարող են դիմել նաև իրավաբանական անձինք:

Իրավաբանական անձի անունից տրված բողոքը վերաբերում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտմանը, եթե իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով խախտվել են նաև նրա մասնակից ֆիզիկական անձանց (բաժնետերերի, անդամների և այլն), ինչպես նաև նրա պաշտոնատար անձանց իրավունքներն ու հիմնարար ա-

զատությունները, կամ այդ անձինք իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով վնաս են կրել, կամ գոյություն ունի այդ անձանց վնաս կրելու հավանականություն:

4. Անձի իրավունքների պաշտպանության նպատակով պաշտպանին կարող են դիմել նաև տվյալ անձի ներկայացուցիչները, ինչպես նաև մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները: Եթե ինչ-ինչ պատճառներով անձն ի վիճակի չէ անձամբ դիմելու պաշտպանին, ապա նա կարող է նոտարական կարգով լիազորել ցանկացած անձի, որն իր անունից պաշտպանին կներկայացնի համապատասխան բողոք: Ինչ վերաբերում է մահացած անձանց ընտանիքի անդամներին ու ժառանգներին, ապա նրանք քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգով դառնում են մահացածի իրավահաջորդներ, որի իրավունքներն անցնում են նրանց: Մահացածի ժառանգներ առաջին հերթին հանդիսանում են նրա երեխաները, ամուսինը, ծնողները, երկրորդ հերթին՝ հարազատ քույրերն ու եղբայրները, որոնք էլ մահացածի անունից կարող են դիմել պաշտպանին:

5. Պաշտպանին բողոքներ չեն կարող ներկայացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների: Խնամակալության և հոգաբարձության մարմինները ստեղծվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք հսկողություն են իրականացնում խնամակալների և հոգաբարձուների գործունեության նկատմամբ:

Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար: Անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանվում է նաև նրանց դաստիարակելու նպատակով: Դրան համապատասխան, խնամակալների և հոգաբարձուների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով:

Խնամակալները և հոգաբարձուներն առանց հատուկ լիազորության հանդես են գալիս իրենց խնամարկյալների իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ուրիշ անձանց հետ հարաբերություններում, ներառյալ դատարանում:

Անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանվում են նրանց ծնողների, որդեգրողների բացակայության, դատարանով ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու, ինչպես նաև այն դեպքերում, երբ անչափահասներն այլ պատճառներով մնում են առանց ծնողական խնամքի, մասնավորապես երբ ծնողները խուսափում են նրանց դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից:

6. Պաշտոնատար անձինք իրավունք ունեն պաշտպանին դիմելու միայն իրենց՝ որպես ֆիզիկական անձանց, խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով: Պաշտոնատար ան-

ձանց աշխատանքային գործունեության և պաշտոնական պարտականությունների կատարման բնագավառում խախտված իրավունքները չեն կարող դառնալ պաշտպանի քննարկման առարկա, քանի որ դրանք կարգավորվում են համապատասխան պետական մարմինների ներքին ակտերով (կանոնադրություն, կանոնագիրք և այլն), ոչ թե Սահմանադրությամբ կամ միջազգային իրավունքի նորմերով: Ուստի դրանք իրենց լուծումը ստանում են վերադատության կամ դատական կարգով:

Հարց 13. Պաշտպանին տրվող բողոքի համար ի՞նչ չափանիշներ են նախատեսվում:

Պատասխան

Օրենքի 9-րդ հոդվածը նախատեսում է պաշտպանին տրվող բողոքի չափանիշները: Մասնավորապես.

1. Բողոքը պետք է պաշտպանին տրվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմանար իր իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին: Օրենքի գործողության առաջին տարում պաշտպանին կարող են տրվել բողոքներ վերջին երեք տարվա ընթացքում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ:

2. Բողոքի համար օրենքը որևէ հատուկ ձև չի սահմանում, սակայն նրանում պետք է նշվի դիմող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն) կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը: Բողոքում պետք է նշվեն նաև խախտված կամ խախտվող իրավունքների և հիմնարար ազատությունների մասին տեղեկությունները: Եթե դիմողն ունի գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաև բողոքի հետ կապված դատական կամ վարչական կարգով ընդունված ակտեր, ապա դրանք կարող է կցել բողոքին:

Բողոքը ներկայացվում է գրավոր կամ բանավոր: Բանավոր բողոքների բովանդակությունը և բերված հոդվածի (9-րդ) 2-րդ մասում նախատեսված տվյալները պետք է արձանագրի պաշտպանը կամ նրա աշխատակազմը: Օրենքի այս դրույթից հստակ երևում է, որ մարդու իրավունքների պաշտպանության ներպետական կառուցակարգերից (մեխանիզմներից) ամենամատչելիին համարվում է պաշտպանի ծառայությունը: Օրինակ՝ մարդու իրավունքների դատական պաշտպանությունը մատչելիության առումով էապես զիջում է պաշտպանի ծառայությանը և շատ դեպքերում չի կարող հասու լինել հասարակության ամենալայն շերտերին: Դա պայմանավորված է նրանով, որ, ի տարբերություն պաշտպանի, մարդու իրավունքների դատական պաշտպանությունը հիմնականում վճարովի է (հայցվորը պարտավոր է վճարել պետական տուրք), և դատարանին դիմելու համար սահմանված է հայցադիմումի հատուկ ձև, որը հիմնականում (վճարովի հիմունքներով) կազմում են փաստաբանները: Հակառակ դեպքում դատարանն այն վարույթ

չի ընդունի: Մինչդեռ պաշտպանի ծառայություններից օգտվելու համար դիմումի պաշտոնական ձև և պետական տուրք սահմանված չեն: Ուստի ցանկացած անձ անարգել կերպով, առանց որևէ օժանդակության, կարող է դիմել պաշտպանին:

3. Ձերբակալված, նախնական կալանք կամ քրեական պատիժն իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաև այլ հարկադրական պահման վայրերում գտնվող անձի կողմից պաշտպանին ուղղված բողոքները և այլ փաստաթղթեր ենթակա չեն ստուգման կամ որևէ գրաքննության: Դրանք այդ հիմնարկների վարչակազմերի կողմից 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն պաշտպանին:

Պաշտպանին ուղղված բողոքներն ընդունող մարմինը (պաշտպանի աշխատակազմը) պարտավոր է դիմողի պահանջով վերջինիս տրամադրել հավաստագիր (ստացական) բողոքի ստացման մասին: Ստացականի նպատակն այն է, որ կարիքն առաջանալիս դիմողը կարողանա ապացուցել, որ իրոք ինքը դիմել է պաշտպանին: Այդ նպատակով 1999թ. նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Քաղաքացիների առաջարկությունները, բողոքները և դիմումները քննարկելու կարգի մասին» օրենքի 9-րդ հոդվածն ամրագրում է, որ քաղաքացիների և իրավաբանական անձանց առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման սահմանված կարգի խախտման համար մեղավոր պաշտոնատար անձինք պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Չարդ 14. Ինչպե՞ս է պաշտպանն արձագանքում տրված բողոքներին:

Պատասխան

Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, ստանալով բողոքը, պաշտպանը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) բողոքը քննարկման ընդունելու մասին, 2) դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին, 3) բողոքը ներկայացնողի համաձայնությամբ այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը, 4) բողոքը չքննարկելու մասին:

Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելիս պաշտպանն ընդունված որոշման պատճենն ուղարկում է դիմողին՝ բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում: Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո պաշտպանն իրավասու է դիմել համապատասխան պետական մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձանց, որպեսզի նրանք նպաստեն բողոքում ներկայացված հանգամանքների ուսումնասիրմանը: Բողոքում նշված հարցերի ուսումնասիրությունը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոն-

նատար անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:

Օրենքը սպառիչ կերպով թվարկում է բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման կապակցությամբ պաշտպանին վերապահված իրավունքները: Պաշտպանը մասնավորապես իրավասու է.

1) անարգել այցելելու ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ գորամիավորումներ, անձանց հարկադիր պահման վայրեր, այդ թվում՝ նախնական կալանքի և ազատազրկման,

2) ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր,

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ նրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալու բողոքում արժարժված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.

4) իրավասու պետական մարմիններին հանձնարարելու բողոքում պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ փորձագիտական հետազոտություններ անցկացնել և պատրաստել եզրակացություններ.

5) ծանոթանալու քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը.

6) ծանոթանալու բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի:

Պաշտպանի գրավոր հանձնարարությամբ նրա լիազորությունները կարող են իրականացնել նաև պաշտպանի տեղակալը, նրա աշխատակազմի աշխատակիցները կամ փորձագետների խորհրդի անդամները:

Օրենքը լուրջ երաշխիքներ է նախատեսում նշված բնագավառներում պաշտպանի լիազորությունների իրականացման համար: Մասնավորապես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանի պահանջով անհատույց և անարգել նրան ներկայացնել իրենց իրավասության ներքո գտնվող ցանկացած նյութ ու փաստաթուղթ, ինչպես նաև բողոքին առնչվող ցանկացած տեղեկություն:

Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ տեղեկությունները պետք է ուղարկվեն նրան հնարավորինս արագ, հարցումն ստանալուց հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ:

Իր լիազորությունների շրջանակում պաշտպանն օգտվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև կազմակերպությունների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց՝ հարկադրական պահման վայրերի վարչակազմի կողմից

անհետաձգելի ընդունելության իրավունքից:

Չարդ 15. Պաշտպանի կողմից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար պարտադիր է, արդյոք, բողոքի առկայությունը:

Պատասխան

Որպես կանոն, պաշտպանն իր գործունեությունն իրականացնում է բողոքի հիման վրա: Սակայն նա իրավասու է նաև սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննությունը, մանավանդ այն դեպքերում, երբ ստանում է տեղեկություն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ երբ հարցն ունենում է բացառիկ կարևոր հասարակական նշանակություն կամ կապված է լինում այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտվելու իրենց շահերի պաշտպանության իրավական միջոցներից:

Չարդ 16. Որո՞նք են պաշտպանի կողմից քննարկման ոչ ենթակա բողոքները:

Պատասխան

1. Օրենքը պաշտպանին ազատում է անանուն բողոքները քննարկելու պարտականությունից: Խնդիրն այն է, որ պաշտպանն իր գործառույթներն իրականացնում է ոչ միայն սույն օրենքին, այլև այլ իրավական ակտերին համապատասխան: Սասնավորապես «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» օրենքի 2-րդ հոդվածն ամրագրում է դիմումին, բողոքին և առաջարկությանը ներկայացվող պահանջները, համաձայն որոնց քաղաքացու, իրավաբանական անձի գրավոր դիմումը, բողոքը և առաջարկությունը պետք է ստորագրված լինի, նշվի դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն: Առանց տվյալ տեղեկությունների, առաջարկությունը, դիմումը, բողոքը համարվում են անստորագիր, չեն քննարկվում և սահմանված կարգով ոչնչացվում են: Առաջարկությունը, դիմումը և բողոքը չեն քննարկվում նաև այն դեպքում, եթե պարզվում է, որ դրանց հեղինակների ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են:

Բացի դրանից, քաղաքացու՝ զրպարտչական նպատակներով, ինչպես նաև ուրիշ անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ կամ արտահայտություններ բովանդակող դիմումը կամ բողոքն առաջացնում է պատասխանատվություն՝ Չայաստանի Չանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Պաշտպանը կարող է չքննարկել անանուն բողոքները և այն բողոքները, որոնք իր կարծիքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում կամ որևէ պահանջ չեն ներկայացնում: Իր գործառույթներն իրականացնելիս պաշտպանն առաջնորդվում է ոչ

միայն միջազգային իրավական ակտերով և ՀՀ օրենսդրությամբ, այլև սեփական խղճով ու հայեցողությամբ: Եթե բողոքի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ այն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին վկայություն կամ պահանջ չի բովանդակում, ապա այն թողնում է առանց քննության՝ այդ մասին հիմնավորված և գրավոր ձևով տեղյակ պահելով դիմումատուին: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս պաշտպանը պարտավոր է դիմողին բացատրել այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը:

3. Եթե բողոքում բարձրացված հարցն իր բնույթով այնպիսին է, որ կարող է լուծվել նաև պետական այն մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որը նախապես չի քննարկել տվյալ գործը, ապա պաշտպանը, բողոքը ներկայացնողի համաձայնությամբ, կարող է այն քննարկման նպատակով փոխանցել տվյալ մարմնին կամ պաշտոնատար անձին՝ վերահսկողություն սահմանելով դրա քննարկման նկատմամբ:

Խնդիրն այն է, որ հանրապետության բնակչության որոշ շրջաններում արմատավորվել է այն թյուր կարծիքը, թե որքան բարձր պետական ատյանի դիմեն, այնքան շուտ կլուծվի իրենց խնդիրը: Լինում են դեպքեր, երբ ամենահասարակ կենցաղային հարցերով, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմնին դիմելու փոխարեն, քաղաքացին դիմում է սահմանադրական դատարան կամ Հանրապետության Նախագահին, որոնք սահմանադրությամբ լիազորված չեն զբաղվելու նման հարցերով: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ օրենքը հնարավորություն է տալիս, որպեսզի քաղաքացու համաձայնությամբ պաշտպանը նրա դիմումն ուղարկի իրավասու պետական մարմնին և հսկողություն իրականացնի դրա լուծման նկատմամբ, ինչն ավելի արդյունավետ կդարձնի մարդու իրավունքների պաշտպանությունը: Իրավասու պետական մարմինը, պաշտպանից ստանալով դիմումը, պարտավոր է օրենսդրությամբ սահմանված ժամկետում ոչ միայն քննարկել դրանում ներկայացված պահանջը, այլև հանգամանորեն պատճառաբանել դրա վերաբերյալ իր դիրքորոշումը:

Չարդ 17. Ո՞րն է բողոքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պարզաբանումների նպատակը

Պատասխան

Խնդիրն այն է, որ բողոքներն ուսումնասիրելիս պաշտպանը պարտավոր է հնարավորություն տալ այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ նրա պաշտոնատար անձին, որի որոշումը կամ գործողությունը (անգործությունը) բողոքարկվում է, պարզաբանումներ տալու բողոքի առթիվ կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորելու իր դիրքորոշումն ամբողջությամբ: Բողոքի քննարկման արդյունքները քննարկման ավարտից հետո տասնօրյա ժամկետում հանձնվում են այն պետական կամ տեղական ինքնակառավարման

մարմնին կամ դրա պաշտոնատար անձին, որի որոշումը կամ գործողությունը (անգործությունը) բողոքարկվում է: Վերջինս պարտավոր է իր դիրքորոշումն ու պարզաբանումները պաշտպանին ուղարկել ուսումնասիրության արդյունքներն ստանալուց հետո ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգել պաշտպանը: Բողոքի քննարկման այս կարգն ապահովում է պաշտպանի կողմից բողոքի քննարկման օբյեկտիվությունը, քանզի հնարավոր չէ միակողմանի տեղեկատվության հիման վրա օբյեկտիվ որոշում կայացնել: Ուստի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ պաշտոնատար անձին հնարավորություն է ընձեռվում պարզաբանելու իր առարկություններում ու փաստարկներում տեղ գտած պահանջների բովանդակությունը բողոքի կապակցությամբ: Եթե դատարանում վեճի կողմերը անմիջականորեն վիճաբանության միջոցով ներկայացնում են իրենց առարկություններն ու առաջարկությունները վեճի առարկայի վերաբերյալ, ապա տվյալ դեպքում այդ վիճաբանությունն իրականացվում է փաստաթղթային կարգով: Պաշտպանը ոչ թե լսում է կողմերի բացատրությունները, այլ ուսումնասիրում է նրանց կողմից ներկայացված գրավոր ապացույցները:

Մինչև բողոքի վերաբերյալ պաշտպանի կողմից վերջնական որոշման ընդունումը քննարկման ենթակա բողոքների բովանդակությունը հրապարակման ենթակա չէ: Պաշտպանն իրավունք չունի բողոքի ուսումնասիրության ընթացքում դիմողի կամ այլ անձանց մասին իրեն հայտնի դարձած տվյալներ հրապարակել՝ առանց նրանց գրավոր համաձայնության:

Չարդ 18. Պաշտպանի կողմից ի՞նչ բնույթի որոշումներ են ընդունվում:

Պատասխան

Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն քննարկված բողոքի արդյունքների հիման վրա պաշտպանը պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) Առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ նրա պաշտոնատար անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ ինքը մարդու իրավունքների և ազատությունների խախտում է տեսնում, վերացնել թույլ տրված խախտումները՝ մշելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և հնարավոր միջոցառումները:

2) Մարդու իրավունքների և ազատությունների խախտման բացակայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում չի բացահայտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ նրա պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում:

3) Դիմել Չայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման հարցե-

րով: Այստեղ հարկ է նշել, որ չնայած օրենքը պաշտպանին իրավունք է տալիս որոշում կայացնելու սահմանադրական դատարան դիմելու մասին, սակայն ՀՀ գործող հիմնական օրենքը սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շարքում պաշտպանին չի նախատեսում: Սահմանադրական դատարան դիմելու որոշում կայացնելու իրավունքը պաշտպանը կարող է իրականացնել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո: Պաշտպանը սահմանադրական դատարան կարող է դիմել միայն մարդու իրավունքներն ու ազատությունները ոտնահարող օրենքի՝ սահմանադրության համապատասխանության հարցով:

4) Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի և նրա պաշտոնատար անձի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան դիմում ներկայացնելու մասին, եթե խախտում թույլ տված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը կամ դրա մասը:

Պաշտպանին իրավունք է վերապահվում բողոքարկելու պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի այն իրավական ակտը, որով ոտնահարվել են մարդու իրավունքներն ու ազատությունները: Այս գործառույթը պետական մարմինների գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ձև է, որը որոշ առումով նմանվում է դատախազական մարմիններին, միայն այն տարբերությամբ, որ դատախազական մարմինները բողոքարկում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց այն ակտերն ու գործողությունները (անգործությունը), որոնցով ոտնահարվում է պետության շահը:

5) Առաջարկելու իրավասու պետական մարմիններին կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել այն պաշտոնատար անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և (կամ) որը խախտել է սույն օրենքի պահանջները: Վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող մարմինները պարտավոր են արձագանքել պաշտպանի որոշմանը և կատարել գործի հանգամանքների բազմակողմանի քննություն: Չի բացառվում, որ արդյունքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող մարմինը գործի քննության արդյունքում մերժի պաշտպանի առաջարկը, եթե գտնի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմնի ակտը կամ պաշտոնատար անձի գործողությունը համապատասխանում են Սահմանադրությանը և օրենքներին:

Պաշտպանը պարտավոր է բողոքի վերաբերյալ որոշման պատճենը՝

որոշումն ընդունելու օրվանից 5 օրվա ընթացքում ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նրա այն պաշտոնատար անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվել են:

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ նրա պաշտոնատար անձը, որն ստացել է պաշտպանի միջնորդությունը, պարտավոր է այն ստանալու օրվանից քսանօրյա ժամկետում դրա իրականացման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել պաշտպանին: Անհրաժեշտության դեպքում պաշտպանի համաձայնությանը այդ ժամկետը կարող է երկարաձգվել:

Պաշտպանը պարտավոր է բողոքի վերաբերյալ իր որոշման պատճենը՝ որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում ուղարկել բողոքն ուղարկած անձին:

Պաշտպանի որոշումը չի կարող խոչընդոտ դառնալ անձի կողմից իր իրավունքները և հիմնարար ազատություններն օրենքով չարգելված այլ միջոցներով պաշտպանելու համար:

Չարդ 19. Ի՞նչ իրավաբանական ուժ ունեն պաշտպանի որոշումները և ի՞նչ երաշխիքներ կան դրանց իրականացման համար:

Պատասխան

Պաշտպանի որոշումները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից պարտադիր կատարման ենթակա չեն: Դրանք խորհրդատվական բնույթի են և առավելապես բարոյական ազդեցություն ունեն, ուստի չեն կարող հանգեցնել մեղավոր պաշտոնատար անձի պատասխանատվությանը: Դրա հետ մեկտեղ, պաշտպանի որոշումների արդյունավետ իրականացման նպատակով օրենքը նրան լիազորում է իրականացնել մի շարք գործողություններ, որոնք կարող են նպաստել իր կողմից ընդունված որոշումների կատարմանը: Այսպես.

ա) Պաշտպանը անհրաժեշտության դեպքում իր գործունեության վերաբերյալ հատուկ զեկույց է ներկայացնում Չայաստանի Չանրապետության Նախագահին և Ազգային ժողովին: Այդ ճանապարհով պաշտպանը մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում փաստորեն ներգրավում է Չանրապետության Նախագահին և Ազգային ժողովին:

Այս ոլորտում պաշտպանի գործունեությունն ավելի արդյունավետ է, քանի որ նա կարող է զանգվածային լրատվության միջոցներով իրապարակել իր նկատառումները իր միջնորդությունը անհետևանք թողած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերաբերյալ, որը լուրջ բարոյական հետևանք կարող է ունենալ:

Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանն իրավասու է, մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա. պետական և տեղա-

կան ինքնակառավարման մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց ուղարկել խորհրդատվական բնույթի պարզաբանումներ և առաջարկություններ:

Չնայած այդ խորհրդատվական բնույթի պարզաբանումները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր իրավաբանական ուժ չունեն, դրանք ներկայացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց բարոյական վարկն ու հանրության կարծիքը նրանց գործունեության վերաբերյալ: Դրանք կարող են մեծապես վնասել իրավախախտ մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց հեղինակությունն ու վարկը:

Չարդ 20. Ո՞րն է պաշտպանի՝ Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին ներկայացվող զեկույցի նպատակը:

Պատասխան

Ամեն տարի՝ առաջին եռամսյակի ընթացքում, պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովին և գործադիր ու դատական իշխանության մարմիններին է ներկայացնում երկրում նախորդ տարվա ընթացքում կատարված մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների կապակցությամբ իր գործունեության զեկույցը, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին: Բացի դրանից, հասարակական հնչողություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև զանգվածային խախտումները չվերանալու դեպքերում պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:

Պաշտպանի զեկույցի միջոցով ամփոփվում է հանրապետությունում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակը: Ամենամյա զեկույցի միջոցով պաշտպանը առկա հիմնախնդիրների լուծման վրա է կենտրոնացնում ոչ միայն պետական իշխանության մարմինների, այլև ամբողջ հանրության ուշադրությունը: Դա նշանակալի հետք է թողնում նաև միջազգային կառույցներում մեր երկրի հեղինակության ու վարկի վրա:

Չարդ 21. Ովքե՞ր են աջակցում պաշտպանի գործունեությանը:

Պատասխան

Օրենքի 23-րդ հոդվածին համապատասխան՝ պաշտպանի գործունեությունն ապահովելու համար նրան կից ստեղծվում է աշխատակազմ, որն իրականացնում է պաշտպանի գործունեության իրավաբանական, կազմակերպչական, գիտական-վերլուծական, տեղեկատվական և այլ բնույթի գործա-

ռույթները: Պաշտպանի աշխատակազմը պետական հիմնարկ է, որն ունի Հայաստանի Հանրապետության պետական գինանշանի պատկերով և իր անվամբ կնիք: Մարզերում կարող են ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանի մարզային ներկայացուցչություններ: Պաշտպանի աշխատակազմի ծառայողները աշխատում են մշտական հիմունքներով և պետական բյուջեից ստանում են համապատասխան վարձատրություն:

Ելնելով այն հանգամանքից, որ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը բավական բարդ և պատասխանատու ոլորտ է, օրենքի 26-րդ հոդվածը լիազորում է պաշտպանին խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով ստեղծել փորձագետների խորհուրդ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ ունեցող անձանցից: Փորձագիտական խորհրդի անդամներին հրավիրում է պաշտպանը: Փորձագիտական խորհրդի կազմը չի կարող գերազանցել 20 հոգուն: Վերջիններս աշխատում են կամավորական հիմունքներով և իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական կարգով: Փորձագիտական խորհրդում կարող են ընդգրկվել մարդու իրավունքներով զբաղվող իրավաբան գիտնականներ, իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով* ամրագրված մարդու իրավունքներն ու ազատությունները

- Կյանքի իրավունք
- Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք
- Անձնական, ընտանեկան կյանքի և բնակարանի անձեռնմխելիության իրավունք
- Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք
- Խոսքի և կարծիքն արտահայտելու ազատություն
- Մտքի, խղճի և կրոնի ազատություն
- Խոշտանգումներից, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքից և պատժից պաշտպանվելու իրավունք
- Իրավահավասարության (անխտրականության) իրավունք
- Օրենքի առաջ հավասար պաշտպանության իրավունք
- Միավորվելու և ժողովների իրավունք
- Պետության կառավարման գործին մասնակցելու իրավունք, ընտրելու և ընտրվելու իրավունք, պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք
- Մասնավոր սեփականության իրավունք
- Աշխատանքի ազատ ընտրության իրավունք, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության և աշխատանքի բարենպաստ պայմանների իրավունք

- Հանգստի իրավունք
- Անուսնության իրավունք
- Բավարար կենսամակարդակի, ներառյալ սննդի, հագուստի և բնակարանի իրավունք
- Սոցիալական ապահովության իրավունք
- Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունք
- Կրթության իրավունք
- Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք
- Արդարացի դատաքննության իրավունք
- Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք
- Իրավասուբյեկտության իրավունք
- Ապաստան հայցելու իրավունք
- Քաղաքացիության իրավունք
- Ինքնորոշման իրավունք
- Փոքրամասնություններին պատկանող անձանց՝ սեփական ավանդույթները, լեզուն, մշակույթը պաշտպանելու իրավունք

*ՄԻՀՀ — Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի թթԻՄԴ — Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի

ՄՏՄԻՄԴ — Սոցիալական, տնտեսական, մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի

ՄԻԵԿ — Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 21.10.2003

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

Սույն օրենքը սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու կարգը, լիազորությունները, գործունեության պայմանները և երաշխիքները:

Հոդված 2. Մարդու իրավունքների պաշտպանը

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ է, որը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

Հոդված 3. Պաշտպանի նշանակումը

1. Պաշտպանի պաշտոնում նշանակվում է 35 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, հասարակության մեջ վայելում է բարձր հեղինակություն:

2. Պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ից ավելիով՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից:

Պաշտոնի նշանակվելիս Պաշտպանը տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով մարդու իրավունքների պաշտպանի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին, հասարակական համակեցության և արդարության սկզբունքներին, պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

երդվում են, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ջանասիրությամբ»:

3. Պաշտպանը պաշտոնում նշանակվում է 6 տարի ժամկետով:

Սույն անձը Պաշտպանի պաշտոնում չի կարող նշանակվել միմյանց հաջորդող երկու ժամկետից ավելի:

Ֆոդված 4. Պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը

1. Պաշտպանը չի կարող զբաղեցնել պետական կամ այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մասնկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից:

2. Պաշտպանը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ ընտրություններում առաջադրել իր թեկնածությունը, մասնակցել նախընտրական քարոզչությանը:

3. Պաշտպանը պարտավոր է սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործունեությունն ընդհատել պաշտոնավարության անցնելուց հետո՝ ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում:

Ֆոդված 5. Պաշտպանի անկախությունը

1. Պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին:

Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի:

2. Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաև որպես վկա, իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Ֆոդված 6. Պաշտպանի լիազորությունների դադարումը

1. Պաշտպանի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից:

2. Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են միայն, եթե

- 1) խախտվել են սույն օրենքի 4-րդ հոդվածի պահանջները.
- 2) Պաշտպանի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել.
- 3) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
- 4) նա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով հրաժարական է ներկայացրել իր լիազորությունները վայր դնելու մասին.
- 5) Պաշտպանը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.
- 6) նա առողջական վիճակի պատճառով ոչ պակաս, քան 6 ամիս անընդմեջ իր լիազորությունները չի կատարել.
- 7) Պաշտպանը մահացել է:

3. Վերոնշյալ դեպքերում Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին հարցը Ազգային ժողովի քննարկմանը կարող են ներկայացնել սույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն առաջադրման իրավունք ունեցող անձինք: Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների կեսից ավելիով:

4. Պաշտպանի լիազորությունների դադարեցման դեպքում նոր Պաշտպան պետք է նշանակվի նախորդի լիազորությունների դադարեցման օրվանից մեկ ամսվա ընթացքում: Մինչև նոր Պաշտպան նշանակվելը Պաշտպանի պարտականությունները կատարում է նրա տեղակալը:

Յոթված 7. Պաշտպանի քննարկմանը ենթակա բողոքները

1. Պաշտպանը քննարկում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու (այդ թվում՝ նաև քաղաքացու) իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Նա կարող է տեղեկություններ պահանջել դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին և առաջարկներ ներկայացնել դատարան՝ երաշխավորելով

քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը: Պաշտպանն իրավասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ:

2. Պաշտպանը չի քննարկում ոչ պետական մարմինների և կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բողոքները:

3. Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաև պետական այլ մարմինների նիստերին և ելույթ ունենալ, եթե քննարկվում են մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր, ինչպես նաև այդ նիստերի քննարկմանը ներկայացնել այդ կամ դրանց ենթակա մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների, ինչպես նաև սույն օրենքի պահանջների խախտման վերաբերյալ հարցեր:

4. Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերին, ելույթ ունենալ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, երբ քննարկվում են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր:

Յոթված 8. Պաշտպանին դիմելու իրավունքը

1. Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից:

Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար:

Պաշտպանին իրավունք ունի դիմել ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձը:

Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչը պետք է երաշխավորվի գործադիրություններում, ձերբակալման վայրերում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձանց հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությամբ: Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների՝ այդ անձանց հետ խոսակցությունները ենթակա չեն միջամտության եւ գաղտնալսման:

Պաշտպանին բողոք ներկայացնելը կամ նրա միջամտությունը չպետք է հանգեցնի բողոքողի նկատմամբ քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցի կիրառման կամ որևէ խտրականության:

2. Պաշտպանին կարող են դիմել նաև իրավաբանական անձինք:

Իրավաբանական անձի անունից տրված բողոքը վերաբերում է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտմանը, եթե իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով խախտվել են նաև նրա մասնակից ֆիզիկական անձանց (բաժնետերերի, փայտտերերի, անդամների և այլն), ինչպես նաև նրա պաշտոնատար անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, կամ այդ անձինք իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով վնաս են կրել, կամ առկա է այդ անձանց վնաս կրելու հնարավորությունը:

3. Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաև մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները:

4. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների, չեն կարող Պաշտպանին բողոքներ ներկայացնել:

5. Պաշտոնատար անձինք իրավունք ունեն Պաշտպանին դիմել միայն իրենց՝ որպես ֆիզիկական անձանց խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով:

Յոթված 9. Պաշտպանին տրվող բողոքը

1. Բողոքը պետք է Պաշտպանին տրվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին:

2. Սույն օրենքի գործողության առաջին տարում Պաշտպանին կարող են տրվել բողոքներ վերջին երեք տարվա ընթացքում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ: Բողոքի համար

որևէ հատուկ ձև չպետք է սահմանվի, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն) կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը: Բողոքում պետք է նշվեն նաև մարդու խախտված կամ խախտվող իրավունքների և հիմնարար ազատությունների մասին տեղեկությունները:

Եթե դիմողն ունի գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաև բողոքի հետ կապված դատական կամ վարչական կարգով ընդունված ակտեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

3. Բողոքը ներկայացվում է գրավոր կամ բանավոր: Բանավոր բողոքների բովանդակությունը եւ սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված տվյալները պետք է արձանագրի պաշտպանը կամ նրա աշխատակազմը:

4. Ձերբակալված, նախնական կալանք կամ քրեական պատիժն իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաև այլ հարկադրական պահման վայրերում գտնվող անձի կողմից Պաշտպանին ուղղված բողոքները և այլ փաստաթղթեր ենթակա չեն ստուգման ու որևէ գրաքննության: Դրանք այդ հիմնարկների վարչակազմերի կողմից 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն Պաշտպանին:

5. Պաշտպանին ուղղված բողոքներն ընդունող մարմինը պարտավոր է դիմողի պահանջով վերջինին տրամադրել հավաստագիր (ստացական)՝ բողոքի ստացման մասին:

6. Պաշտպանին ուղղված բողոքների համար պետական տուրք չի գանձվում:

Հոդված 10. Պաշտպանի կողմից քննարկման ոչ ենթակա բողոքները

1. Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան:

2. Պաշտպանը կարող է չքննարկել անանուն բողոքները և այն բողոքները, որոնք իր կարծիքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում կամ պահանջ չեն ներկայացնում:

3. Եթե բողոքում բարձրացված հարցն իր բնույթով կարող է լուծել նաև

պետական այլ մարմինը կամ պաշտոնատար անձը, և եթե այդ անձը նախապես չի քննարկել տվյալ գործը, Պաշտպանը բողոքը ներկայացնողի համաձայնությամբ կարող է բողոքը քննարկման նպատակով փոխանցել նրան՝ վերահսկողություն սահմանելով դրա քննարկման նկատմամբ:

Այս դեպքում դիմողը տեղեկացվում է, որ բողոքն այլ պաշտոնատար անձի է փոխանցվել:

Ֆողված 11. Բողոքների ընդունումը

1. Բողոքը ստանալով՝ Պաշտպանը որոշում է ընդունում՝

1) բողոքը քննարկման ընդունելու մասին.

2) դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին.

3) բողոքը ներկայացնողի համաձայնությամբ բողոքը այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը.

4) բողոքը չքննարկելու մասին:

2. Բողոքի քննարկման մերժումը պետք է հիմնավորվի սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս Պաշտպանը պարտավոր է դիմողին բացատրել այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը:

3. Պաշտպանն ընդունված որոշման պատճենն ուղարկում է դիմողին հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

4. Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները:

5. Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձանց, որպեսզի նրանք

նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը:

6. Բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:

Ֆողված 12. Բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրումը

1. Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է՝

1) անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաև նախնական կալանքի և ազատազրկման վայրեր:

2) ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր:

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ:

4) իրավասու պետական մարմիններին հանձնարարել բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզելու ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ և պատրաստել եզրակացություններ:

5) ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը:

6) ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի եւ փաստաթղթի:

Պաշտպանի գրավոր որոշմամբ սույն մասի 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված լիազորությունները կարող են իրականացնել նաև Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները կամ փորձագետները

խորհրդի անդամները:

2. Պետական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններին Պաշտպանը կարող է ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութեր և փաստաթղթեր, ինչպես նաև բողոքը քննարկելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն ներկայացնել Պաշտպանին անվճար և անարգել:

4. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ տեղեկությունները պետք է ուղարկվեն Պաշտպանին հնարավորինս արագ, հարցումն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ:

5. Իր լիազորությունների շրջանակում Պաշտպանն օգտվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև կազմակերպությունների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց, հարկադրական պահման վայրերի վարչակազմի մոտ անհետաձգելի ընդունելության իրավունքից:

Յոդված 13. Բողոքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պարզաբանումները

1. Բողոքներն ուսումնասիրելիս Պաշտպանը պարտավոր է հնարավորություն տալ այն պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, պարզաբանումներ տալ բողոքի և կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորել իրենց դիրքորոշումն ամբողջությամբ:

2. Բողոքի վերաբերյալ քննարկման արդյունքները, քննարկման ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, հանձնվում են այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են: Վերջինս պարտավոր է իր դիրքորոշումն ու պարզաբանումները Պաշտպանին ուղարկել ուսումնասիրության արդյունքներն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգել Պաշտպանը:

Ֆողված 14. Բողոքների կամ դրանց բովանդակության հրապարակումը

1. Մինչև բողոքի վերաբերյալ Պաշտպանի կողմից վերջնական որոշման ընդունումը, քննարկման ենթակա բողոքները կամ դրանց բովանդակությունը հրապարակման ենթակա չեն:

2. Պաշտպանն իրավունք չունի բողոքի ուսումնասիրման ընթացքում իրեն հայտնի դարձած դիմողի կամ այլ անձանց մասին տվյալներ հրապարակել՝ առանց նրանց գրավոր համաձայնության:

Ֆողված 15. Պաշտպանի կողմից ընդունվող որոշումները

1. Քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ նա տեսնում է մարդու իրավունքների և ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները.

2) մարդու իրավունքների և ազատությունների խախտման բացակայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում չի բացահայտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում.

3) դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման հարցերով.

4) մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի և դրա պաշտոնատար անձի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին, եթե խախտում թույլ տված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը.

5) առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել պաշտոնատար այն անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և (կամ) որը խախտել է սույն օրենքի պահանջները:

2. Պաշտպանը պարտավոր է բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշման պատճենը, որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում, ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվել են:

3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որն ստացել է Պաշտպանի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված միջնորդությունը, պարտավոր է դա ստանալու օրվանից քսանօրյա ժամկետում ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել Պաշտպանին: Անհրաժեշտության դեպքում Պաշտպանի համաձայնությամբ այս ժամկետը կարող է երկարաձգվել:

4. Պաշտպանը, բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված իր որոշման պատճենը, որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում, պարտավոր է ուղարկել բողոքն ուղարկած անձին:

Պաշտպանի որոշումը չի կարող խոչընդոտ դառնալ անձի կողմից իր իրավունքները և հիմնարար ազատություններն օրենքով չարգելված այլ միջոցներով պաշտպանելու համար:

5. Պաշտպանը կարող է անհրաժեշտության դեպքում հատուկ զեկույցներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին և Ազգային ժողով:

6. Պաշտպանը կարող է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել իր միջնորդությանը չպատասխանած կամ միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ տեղեկություն՝ Պաշտպանի որոշման և միջնորդության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձանց պատասխանների հետ միասին, եթե սպառվել են պետական մարմիններում հարցը լուծելու համար Պաշտպանի բոլոր հնարավորությունները:

Յոդված 16. Պաշտպանի կողմից տրվող պարզաբանումները

Պաշտպանն իրավասու է մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա, ուսումնասիրության արդյունքների ամփոփման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց ուղարկել խորհրդատվական բնույթի պարզաբանումներ և առաջարկություններ:

Յոդված 17. Պաշտպանի զեկույցը

1. Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին:

2. Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:

Յոդված 18. Պատասխանատվությունը օրենքի պահանջների խախտման համար

Պաշտպանի որոշումների վրա ազդելու նպատակով նրա գործունեությանը միջամտելը կամ պաշտոնատար անձանց կողմից սույն օրենքով սահմանված Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ սահմանված ժամկետներում նյութեր կամ փաստաթղթեր չներկայացնելը կամ Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելը առաջացնում է պատասխանատվություն՝ դատավորի կամ դատարանի հանդեպ համանման խախտումների համար նախատեսված կարգով եւ չափով:

Յոդված 19. Պաշտպանի անձեռնմխելիությունը

1. Պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում օժտված է անձեռնմխելիությամբ: Նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, նա չի կարող կալանավորվել կամ ձերբակալվել: Պաշտպանը,

նրա բնակարանը չեն կարող խուզարկվել առանց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաձայնության: Պաշտպանի անձեռնմխելիությունը տարածվում է նաև նրա ուղեբեռների, նամակագրության, Պաշտպանի օգտագործած կապի միջոցների, ինչպես նաև նրան պատկանող փաստաթղթերի վրա:

2. Պաշտպանին հանցանքի վայրում բռնելու դեպքում ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձն անմիջապես այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին, որը պետք է որոշում ընդունի դրա հետագա կիրառման համար համաձայնություն տալու մասին: Նման համաձայնություն 24 ժամվա ընթացքում չստանալու դեպքում Պաշտպանն անմիջապես պետք է ազատ արձակվի:

3. Պաշտպանն իրավունք ունի հրաժարվելու իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին քրեական կամ քաղաքացիական գործով որպես վկա ցուցմունքներ տալուց:

Հոդված 20. Պաշտպանի սոցիալական երաշխիքները

1. Պաշտպանի աշխատավարձը հավասար է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի աշխատավարձին:

2. Պաշտպանն ունի 30 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

3. Պաշտպանն իր լիազորությունների իրականացման ողջ ժամանակահատվածում ազատվում է ժամկետային զինվորական ծառայությունից, զորահավաքներից և վարժական հավաքներից:

Հոդված 21. Պաշտպանի անվտանգությունը

Պաշտպանը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության պաշտպանության ներքո: Իրավասու պետական մարմինները Պաշտպանի դիմումի հիման վրա պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ Պաշտպանի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու նպատակով:

Հոդված 22. Պաշտպանի տեղակալը

1. Պաշտպանն ունի տեղակալ, որը նշանակվում է Պաշտպանի առաջարկությամբ, սույն օրենքով Պաշտպանի նշանակման համար

նախատեսված կարգով և պայմաններով, ունի անկախության և գործունեության նույն երաշխիքները:

2. Պաշտպանի տեղակալն իրականացնում է Պաշտպանի լիազորությունները Պաշտպանի համձնարարությամբ, նրա բացակայության ժամանակ կամ Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում: Վերջին դեպքում Պաշտպանի տեղակալն օգտվում է Պաշտպանի համար նախատեսված բոլոր իրավունքներից, երաշխիքներից ու անձեռնմխելիությունից:

3. Պաշտպանի տեղակալի այլ լիազորություններ սահմանում է Պաշտպանը:

Յոթերորդ 23. Պաշտպանի աշխատակազմի կարգավիճակը

1. Պաշտպանի գործունեությունն ապահովելու համար Պաշտպանը ստեղծում է աշխատակազմ:

2. Պաշտպանի աշխատակազմն իրականացնում է Պաշտպանի գործունեության իրավաբանական, կազմակերպչական, գիտական-վերլուծական, տեղեկատվական և այլ ապահովում:

3. Պաշտպանի աշխատակազմը պետական հիմնարկ է, որն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվանք կնիք:

Մարզերում կարող են ստեղծվել նարդու իրավունքների պաշտպանի նարզային ներկայացուցչություններ:

4. Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ չեն և աշխատում են ժամկետային աշխատանքային պայմանագրերով: Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները պահպանում են պայմանագրի ժամկետը լրանալուց հետո նախկին ծառայությանն անցնելու երաշխիքը, եթե աշխատակազմում աշխատանքի անցնելուց առաջ քաղաքացիական ծառայողներ են եղել: Աշխատակազմում նրանց աշխատանքը հավասարեցվում է քաղաքացիական ծառայությանը:

5. Այն անձինք, ովքեր որևէ պաշտոն են զբաղեցնում Պաշտպանի աշխատակազմում, չեն կարող մեղադրվել, հետաքննության ենթարկվել, ձերբակալվել, կալանքի ենթարկվել կամ դատի տրվել Պաշտպանի համձնարարականի համաձայն իրենց պարտականությունները կատարելիս, որևէ գործողության, կարծիքի կամ ընդունած որոշման համար: Եթե աշխատակազմում որևէ պաշտոն զբաղեցնող անձը

ձերբակալվում է, կալանքի է ենթարկվում կամ դատի է տրվում այլ հանգամանքի պատճառով, ապա մեղադրող մարմինը պետք է սահմանված կարգով և ժամկետում այդ մասին տեղեկացնի Պաշտպանին:

Չորված 24. Պաշտպանի գործունեության ֆինանսավորումը

1. Պաշտպանը և նրա աշխատակազմը ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ առանձին տողով:

Պաշտպանի և նրա աշխատակազմի բյուջետային հայտը կազմում և սահմանված կարգով Յայաստանի Յանրապետության կառավարություն է ներկայացնում Պաշտպանը: Յայտն առանց փոփոխության ընդգրկվում է Յայաստանի Յանրապետության պետական բյուջեի նախագծում:

Եթե Յայաստանի Յանրապետության կառավարության կարծիքով Յայաստանի Յանրապետության պետական բյուջեում պետք է նախատեսել ավելի քիչ ծախսեր, քան ներկայացված է Պաշտպանի բյուջետային հայտում, ապա Յայաստանի Յանրապետության կառավարությունը Յայաստանի Յանրապետության պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ Ազգային ժողով պետք է ներկայացնի նաև իր առաջարկն այդ ծախսերի վերաբերյալ և նվազեցման հիմնավորումը:

2. Պաշտպանն ինքնուրույն է մշակում և իրագործում իրեն վերապահված միջոցների ծախսման հաշվարկը:

3. Ֆինանսական հաշվետվությունը Պաշտպանը ներկայացնում է սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով:

Չորված 25. Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

1. Պաշտպանը հաստատում է աշխատակազմի կառուցվածքը, նրա կանոնակարգը և անմիջականորեն ղեկավարում է աշխատակազմի աշխատանքները:

2. Ծախսերի հաշվարկի շրջանակներում Պաշտպանը որոշում է իր աշխատակազմի աշխատողների թվաքանակը և հաստիքացուցակը:

3. Աշխատակազմի ղեկավարման հետ կապված հարցերով Պաշտպանն արձակում է հրամաններ:

Չորված 26. Փորձագիտական խորհուրդը

1. Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է ստեղծել փորձագետների խորհուրդ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից:

2. Փորձագիտական խորհրդի անդամներին հրավիրում է Պաշտպանը:

3. Փորձագիտական խորհրդի կազմը չի կարող գերազանցել 20 անդամը:

4. Փորձագիտական խորհրդի անդամները ներգրավվում են կամավորական հիմունքներով և իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական կարգով:

Ֆոդված 27. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը և 3-րդ մասը, 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ուժի մեջ են մտնում Պաշտպանի նշանակման և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու իրավունքի մասին դրույթները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանելուց հետո:

2. Մինչև սահմանադրական փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության Նախագահը՝

1) Ազգային ժողովի խմբերի և խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո նշանակում է Պաշտպանին.

2) տալիս է 6-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով պահանջվող համաձայնությունները:

Առաջին Պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանում է սույն հոդվածի առաջին մասով սահմանված սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեսուներորդ օրը:

Առաջին Պաշտպանը նշանակվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
19.11.2003
ՀՕ-23**

**Մարդու իրավունքների պաշտպանի
հասցեն՝
Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 375019, Պռոշյան 12**

**հեռախոս /3741/ 26-26-94/95
e-mail: ombuds@ombuds.am**



Ambassade van het

Koninkrijk der Nederlanden

Գրքույկը հրատարակվել է «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման» ծրագրի աջակցությամբ:

Ծրագիրը հրականացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից Նիդերլանդների զարգացման ծրագրերի հարցերով նախարարի ֆինանսական աջակցությամբ:

Գրքույկի հրատարակմանը տեխնիկական աջակցություն է ցուցաբերել ԱՄՆ Զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Հայաստան. օրենսդրի հզորացման ծրագիրը:

ՆՇՈՒՄՆԵՐ